Հավելված
ՀՀ կառավարության 2015թ.
դեկտեմբերի 10-ի նիստի N 54
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՔԱՐԱՆՁԱՎՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	**Միջոցառման անվանումը, նպատակը, խնդիրը**	**Ակնկալվող արդյունքը (վերստուգելի չափանիշը)**	**Պատասխանատու կատարողները (համակատա-րողները)**	**Կատարման ժամկետը**	**Ֆինանսա-վորման աղբյուրը**
1	**ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի գյուղի Մագելանի (Մագելի) քարանձավի՝ զբոսաշրջության նպատակներով օգտագործման և պատշաճ պահպանման ապահովում**				Ֆինանսավորում չի պահանջվում
1.1	Հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության և արդյունավետության բարձրացման, ինչպես նաև զբոսաշրջության համապատասխան ենթակառուցվածքների արդիականացման և ընդլայնման **<u>խնդիրը</u>** լուծելու համար՝ քարանձավներն անհրաժեշտ ենթակառուցվածքներով ապահովելու և զբոսաշրջության նպատակներով օգտագործելու **<u>նպատակով, մասնավորապես</u>** Մագելանի քարանձավն՝ **ապահովել համապատասխան ներդրողի ընտրության համար մրցույթի կազմակերպում** (մրցութային հանձնաժողովում ընդգրկելով զբոսաշրջության բնագավառում ՀՀ կառավարության լիազոր մարմնի	Հայտարարված մրցույթ Քարանձավի օգտագործման ծրագիր	ՀՀ մշակույթի նախարարություն	2016թ. մարտի 1-ին տասնօրյակ	

	ներկայացուցչին): Մրցույթի պայմաններում ընդգրկվում է նաև հայտատուի կողմից ներկայացվող՝ քարանձավի օգտագործման ծրագիրը				
1.2	Մրցույթում հաղթող ճանաչված ներդրողի հետ սահմանված կարգով վարձակալության պայմանագրի կնքում	Ներդրողի հետ կնքված Մագելանի քարանձավի վարձակալության պայմանագիր՝ առնվազն 25 տարի ժամկետով, երկարաձգման հնարավորությամբ	ՀՀ մշակույթի նախարարություն Ներդրող (համաձայնությամբ)	2016թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	
1.3	Վարձակալության պայմանագրի կատարման մոնիթորինգ	Պայմանագրի պատշաճ կատարման ապահովում Տարեկան հաշվետվությունների քննարկումներ ՀՀ մշակույթի, ՀՀ բնապահպանության և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովում	ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2018թ. պարբերաբար՝ տարեկան մեկ անգամ	
2	**Ընտրված պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հանդիսացող քարանձավների՝ զբոսաշրջության նպատակներով օգտագործման և պատշաճ պահպանման ապահովում**				ֆինանսավորում չի պահանջվում

2.1.	Աշխատանքային խմբում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հանդիսացող քարանձավների ընտրության քննարկումների կազմակերպում	Ընտրված 3 քարանձավներ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ վարչապետի 03.06.2015թ. N 460-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբ	2016թ. հուլիսի 2-րդ տասնօրյակ	
2.2.	Ընտրված պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հանդիսացող քարանձավների՝ զբոսաշրջության նպատակներով արդյունավետ օգտագործման ապահովման համար կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի ձևավորում	Ձևավորված հանձնաժողով՝ կազմված ՀՀ մշակույթի, ՀՀ բնապահպանության, ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունների ներկայացուցիչներից	ՀՀ մշակույթի նախարարություն	2016թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ	
2.3.	Ընտրված քարանձավների՝ զբոսաշրջության նպատակներով օգտագործման և պատշաճ պահպանման համար համապատասխան պահանջների ու պայմանների մշակում Անհրաժեշտության դեպքում հանրային (ինժեներա-տրանսպորտային) ենթակառուցվածքների ապահովման նպատակով առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն	Յուրաքանչյուր քարանձավի օգտագործման համար հաստատված պահանջների ու պայմանների առկայություն	ՀՀ մշակույթի նախարարություն, շահագրգիռ այլ մարմինների եզրակացությունների հիման վրա	2016թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ Քարանձավների ուսումնասիրման առաջնահերթության սահմանում՝ հատուկ գրաֆիկի համապատասխան	
2.4.	ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին ու պայմաններին համապատասխան քարանձավներն անհրաժեշտ ենթակառուցվածքներով ու հնարավորություններով ապահովելու և զբոսաշրջության նպատակներով օգտագործելու նպատակով համապատասխան ներդրողի ընտրության համար մրցույթի	Հայտարարված մրցույթ	ՀՀ մշակույթի նախարարություն	2016թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	

	կազմակերպում (մրցութային հանձնաժողովում ընդգրկելով զբոսաշրջության բնագավառում ՀՀ կառավարության լիազոր մարմնի ներկայացուցչին)				
2.5.	Մրցույթում հաղթող ճանաչված ներդրողների հետ սահմանված կարգով վարձակալության պայմանագրի կնքում	Կնքված վարձակալություն պայմանագրեր՝ առնվազն 25 տարի ժամկետով երկարաձգման հնարավորությամբ	ՀՀ մշակույթի նախարարություն	2017թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	
2.6.	Վարձակալության պայմանագրերի կատարման մոնիթորինգ	Պայմանագրի պատշաճ կատարման ապահովում Տարեկան հաշվետվությունների քննարկումներ ՀՀ մշակույթի, ՀՀ բնապահպանության և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովում	ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2016-2018թ. պարբերաբար՝ տարեկան մեկ անգամ	
2.7.	Քարանձավների՝ որպես զբոսաշրջային գրավչության օբյեկտ, մարքեթինգ և խթանում	Քարանձավների ներկայացում Հայաստանը ներկայացնող գովազդատեղեկատվական նյութերում, ընդգրկում օտարերկրյա լրագրողների, ոլորտի մասնագետների ճանաչողական այցերի ծրագրերում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հայաստանի զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)	2016-2018թթ. պարբերաբար	